ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 58-Ա

30 հունվարի 2026 թ.

ՔՐԻՍՏԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՎԱՆԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-րդ, 37.2-րդ, 39-րդ կետերի պահանջներն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 12-ի N 551 արձանագրությունը (2026 թվականի հունվարի 22-ի Ն/182-2026), ինչպես նաև Քրիստինա Գասպարյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Քրիստինա Գասպարյանին 2026 թվականի փետրվարի 2-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճավանի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով (02.02.2026-02.02.2031թթ.):

2. Քրիստինա Գասպարյանի համար սահմանել փորձաշրջան 1 տարի ժամկետով՝ փորձաշրջանի ղեկավար նշանակելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի Հ.2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մանվել Սաֆարյանին:

3. Փորձաշրջանի ղեկավար Մանվել Սաֆարյանին՝ առաջնորդվել կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով:

30.01.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ